entire region. The Zakaryans assumed the responsibility of only half of the circular defense with the supranational alliance formed between Armenia-Hayk and Virk. Perhaps we are talking about stopping the functions of Akhalkalak, Kayen, Pngdzahank, Lori fortress or not performing their full function. The security and protection of the Armenia-Hayk semi-circle will continue to be implemented by the system of fortresses formed during the reign of the Bagratunis.

ՅՈՅՆ ՊԱՏՄԱԳԻՐ ՊՈՂԻԻԲԻՈՍԸ ՊԱՏՄԱԳԻՏՈՒԹԵԱՆ ՄԷՋ ՔՆՆԱԿԱՆ ԵՒ ՎԵՐԼՈՒԾԱԿԱՆ ՄՕՏԵՑՈՒՄՆԵՐԻ ՍԿԶԲՆԱՒՈՐՈՂ

Պատմութեան տեսութեան ու մեթոդաբանութեան հարցերի ուսումնասիրութեան ու լուսաբանման գործընթացն սկսուել է հնագոյն շրջանում՝ Հին Յունաստանում եւ Հին Հռոմում։

Այդ երկրների գիտութեան եւ մշակոյթի մեծերն իրենց մըտաւոր կառոյցով, նորարարական գաղափարներով, պատկերացումներով ու հոգեւոր բարձրարժէք յուշարձաններով դրեցին Արեւմուտքի ժամանակակից քաղաքակրթութեան հիմքերը։ Այդ համատեքստում պատմագրութեան գիտական մեթոդի ու մեթոդաբանութեան որոնումները յետագայում զարգացում են ապրել Եւրոպայում, բայց իրենց վերջնական կերպարանքն են ստացել միայն ԺԹ. դարում։

Պատմագիտութեան սկզբնաւորողներն են հանդիսանում յոյն պատմագիրներ Հերոդոտոսը (Herodotus), *Քսենոփոնը* (Xenophon), *Թուկիդիդէսը* (Thucydides), *Պողիւբիոսը* (Polybius), *Պլուտարքոսը* (Plutarchus), *Տակիտոսը* (Tacitus) *եւ ուրիշներ։ Բայց դրանց շարքում պատմութեան հանդէպ քննական ու վերլուծական մօտեցումների տեսակէտից առանձնանում է Թուկիդիդէսի մտքերի ու գաղափարների ժառանգորդ ու նոր որակի հասցնող, յոյն ականաւոր պատմաբան Պողիւբիոսը (Ք.ա. մօտ 200–118), որի պատմագիտական հայեացքների եւ մեթոդաբանական մօտեցումների վերհանմանն էլ նուիրուած է սոյն հրապարակումը։ Յատկանշական է, որ ռուս պատմաբան Վլ. Դեակովը* (В. А. Дьяков) *Թուկիդիդէսին ներկայացնում է իբրեւ հնագոյն պատմական մտքի գագաթ, իսկ*

Պողիւբիոսին՝ որպէս «համաշխարհային պատմութեան» *հասկացութեան առաջին ձեւակերպողի ու կիրարկողի*[1]*։*

Ա. ՊՈՂԻԻԲԻՈՍԻ ՊԱՏՄԱԳԻՏԱԿԱՆ ՀԱՅԵԱՑՔՆԵՐԸ ԵՒ ՄԵԹՈԴԱԿԱՆ ՄՕՏԵՑՈՒՄՆԵՐԸ

Յիրաւի, պատմութեան հանդէպ քննական, նաեւ վերլուծական մօտեցումների տեսանկիւնից՝ որպէս Թուկիդիդէսի գաղափարների՝ մի շարք գծերով շարունակողն ու զարգացնողը կարելի է համարել յոյն ճանաչուած պատմիչ-պատմագիր Պողիւբիոսին, ով յատկապէս յայտնի է 40 գրքերից (լրիւ պահպանուել է 5 գիրք, միւսները հասել են հատուածաբար) կազմուած իր «Համընդհանուր պատմութիւն» *եռահատոր արժէքաւոր աշխատութեամբ, որում, պատմական նիւթի հանգամանալի շարադրանքի հետ միասին, տուել է նաեւ նրա մշակման մօտեցումների ու մեթոդի իր յարացոյցը (կոնցեպտը)*[2]*։*

Ամէնից առաջ՝ Պողիւբիոսն իր աշխատութեան ներածականում ընթերցողին կողմնորոշում է դէպի պատմութեան իմացութեան անհրաժեշտութիւն ու օգտակարութիւն։ «Անցեալի իմացութիւնը,- *գրում էր նա,-* կարող է միւս գիտելիքներից առաւել ծառայել մարդկանց օգտին», *եւ որ* «պատմութիւնից բաղուած դասերը հաստատապէս կը նպաստեն լուսաւորութեանը, ինչը եւ կը նախապատրաստի մարդկանց հասարակական գործերի տիրապետմանը (իմացութեանը)»[3]*։ Նա պատմութիւն գրելու իր մղումը պայմանաւորում էր Հռոմի կողմից աշխարհը նուաճելու եւ դրա հետ կապուած՝ գրաւեալ տարբեր պետութիւնների վիճակին ծանօթանալու հանգամանքով։ Բացի այդ, պատմութիւն գրելը նա կարեւորում էր նաեւ նրանով, որ նա եղել է* «ոչ միայն իրադարձութիւնների մեծ մասի ականատեսը, այլեւ մասնակցել ու անգամ ուղղութիւն եմ տուել դրանց»[4]*։*

1 В. А. Дьяков, *Методология истории в прошлом и настоящем*, М., изд. «Мысль», 1974, (190 с.), с. 18.

2 Полибий, *Всеобщая история в сорока книгах* (перевод с греческого Ф. Г. Мищенко), т. I, кн. I-V, М., изд. А. Кузнецова, 1890, (с. 680), т. II, кн. VI-XXV, М., 1895, (с .805), т. III, кн. XXVI-XL, М. 1899, с. 785.

3 Полибий, *Всеобщая история в сорока книгах*, т. I, кн. 1, гл. 1, с. 12.

4 Անդ, кн. 3, гл. 4, с. 247:

Պողիւբիոսն ակնարկում է, որ ինքը որքան յիշում է՝ մինչ այդ ոչ մէկը ձեռնամուխ չի եղել գրել «Համընդհանուր պատմութիւն»*։ Նա նշում է նաեւ, որ եղել են պատմագիրներ, ովքեր նկարագրել են միայն առանձին պատերազմներ կամ իրադարձութիւններ, ուստի ինքը անհրաժեշտ է համարել լրացնել այդ բացը։ Իսկ իր խնդիրը եղել է ճշմարտութեան վերհանումը։ Ըստ նրա՝ պատմութեան մաս-մաս (հատուածաբար) ներկայացնելը բաւարար չէ ամբողջը ճիշտ հասկանալու եւ ներկայացնելու համար*[5]*։* «Դրան կարելի է հասնել,- *յաւելում էր նա,-* բոլոր մասերի համադրման միջոցով, թէ որոնք են իրար նման, որոնք՝ տարբեր։ Եւ միայն այդ դէպքում է հնարաւոր իմանալ ամբողջը եւ դրանով իսկ իւրացնել պատմութեան դասերն ու բաւականութիւն ստանալ դրանցից»[6]*։*

Պողիւբիոսն իր աշխատութիւնը «Համընդհանուր պատմութիւն» *է անուանել նաեւ նրա համար, որ, իր իսկ հաւաստմամբ, ներկայացնելով հռոմէական տէրութիւնն իր նուաճումներով՝ դրա տակ հասկացել է գրեթէ ամբողջ աշխարհը։ Եւ սա կարելի է համարել համաշխարհային պատմութեան համակարգուած շարադրման առաջին յաջողուած փորձը։ Թող զարմանալի չթուայ, որ Պողիւբիոսը Աղեքսանդր Մակեդոնացու տիրապետութիւնը Հռոմի համեմատ սահմանափակ էր համարում՝ փաստարկելով, որ Աղեքսանդրը չէր հնազանդեցրել Սիկիլիան, Սարդենիան եւ Լիբիան, էլ չենք ասում Արեւմտեան Եւրոպայի առաւել ռազմատենչ ժողովուրդների մասին*[7]*։ Նա հարց էր տալիս՝* «Այդ ի՛նչպէս եւ ո՛ր հասարակական հիմնարկութիւնների պայմաններում գրեթէ յայտնի ողջ աշխարհը մի յիսուն տարուայ ընթացքում յայտնուեց հռոմէացիների մենիշխանութեան ներքոյ»[8]*։ Յետագայում կը տեսնենք, որ այդ յաջողութիւնը նա բացատրում է Հռոմի պետական կառուցուածքի առաւելութիւններով։*

Պողիւբիոսը, Թուկիդիդէսի նման, իր աշխատութիւնը պատրաստելիս քննադատաբար է մօտեցել օգտագործուած աղբիւրներին եւ միշտ չէ վստահել «ականջներին»*։* «Բնութիւնից մենք օժտուած ենք երկու զգայարաններով,- *գրում էր Պողիւբիոսը,-* այն է՝ *լսողութեամբ* եւ *տեսողութեամբ*, որոնց օգնութեամբ ամէն ինչ տես-

5 Անդ, с. 15-16:

6 Անդ, с. 16:

7 Անդ, с. 13:

8 Անդ:

ընդունում (ընկալում) ու ճանաչում է: Ինչպէս սովորեցնում է Հերակլիտէսը[9], տեսողութիւնը առաւել ճշմարիտ է լսողութիւնից, քանզի աչքերն աւելի ստոյգ վկաներ են, քան ականջները»[10]: *Բերուած խօսոյթն առաջին հերթին վերաբերում է վստահութիւն ներշնչող արժանաւոր պատմագրին ու պատմաբանին՝ առ այն, որ պատմութիւն գրողը պէտք է աւելի հաւատ ընծայի իր աչքերին, քան ականջներին, այսինքն՝ նրա ներկայացրած պատմութիւնը պէտք է* արժանահաւատ *լինի եւ ընթերցողի մօտ* վստահութիւն *ներշնչի:*

Հին աշխարհի պատմիչներին բնորոշ օրինակով՝ Պողիւբիոսը եւս մեծ նշանակութիւն էր տալիս պատմութեան մէջ անհատների *ունեցած դերին, ինչպիսին էին, օրինակ, իր ժամանակակից զօրավարներ Պոպղիոս Կուռնէլիոս Սկիպիոն Ափրիկանոս Աւագը* (Publius Cornelius Scipio Africanus Maior)(*Ք.ա. 235-183*) *եւ Աննիբաղը* (*Ք.ա. 247-183*)*: Խօսք բացելով Աննիբաղի բնաւորութեան մասին՝ Պողիւբիոսը նշում է, որ շատերը նրան բնորոշում են չափազանց դաժան, միւսները՝ շահամոլ: Իհարկէ, իր համար դժուար համարելով պետական գործչի կամ զօրավարի վերաբերեալ ճշմարիտ ու համոզիչ դատողութիւններ անելը, այնուամենայնիւ, աւելի հաւանական էր համարում, որ մարդու բնաւորութիւնն աւելի ակնյայտ է դառնում արտակարգ իրավիճակներում*[11]*: Փիւնիկեան Երկրորդ պատերազմի* (*Ք.ա. 218-201*) *շրջանում,* (*մի պատերազմ, որ պատմութեանը յայտնի այդ երեք պատերազմներից կարելի է համարել վճռականը. ի դէպ, Պողիւբիոսն այն անուանել է նաեւ Աննիբաղեան*)*, երբ Աննիբաղն Ալպերից ներխուժել էր Իտալիա, առանձին ճակատամարտերում յաղթանակներ տարել եւ սպառնում էր գրաւել Հռոմը, հռոմէացիները բռնապետ են ընտրում Կուինտոս Փլաբիոս Մաքսիմոսին* (Quintus Fabius Maximus) (*Մեծագործին*)*: Պողիւբիոսի բնորոշմամբ՝ նա բնութիւնից օժտուած հանճարեղ խելքի տէր մարդ էր*[12]*: Առհասարակ, Պողիւբիոսը չի թերագնահատել անհատի դերը պատմութեան մէջ:*

Պողիւբիոսի կարծիքով՝ պատմութիւնը ծառայում է նաեւ գործնական նպատակների համար, եւ դրանից ստացուած փորձը կարող է նպաստել ապագայի կանխատեսմանը: Ռուս պատմաբաններ Ն. Մաշկինի եւ Վ. Ավդիեւի կարծիքով՝ Պողիւբիոսը դրանով

9 Խօսքը յոյն մեծ փիլիսոփայ Հերակլիտի (մօտ Ն.Ք. 535–470) մասին է:
10 Полибий, *Всеобщая история в сорока книгах*, т. II, кн. 12, гл. 27, с. 396.
11 Полибий, նշ. աշխ., հտ. II, գիրք 9, գլ. 22, с. 198:
12 Անդ, հտ. I, գիրք 3, գլ. 87, с. 338:

սկիզբ է դրել «պրագմատիկ պատմութիւն» *հասկացութեանը*[13]*: Այն յետագայում՝ ԺԸ.-Ի. դարերում, զարգացում ապրեց Գ. Հեգելի, Թ. Մոմզենի, Ֆ. Բրոդելի եւ եւրոպական մի շարք այլ մտածողների կողմից: Օրինակ՝ Հեգէլի մօտ* «պրագմատիկ պատմութեան» *գործնական ձեւակերպում կարելի է համարել նրա հանրայայտ բանաձեւումը՝* «Ամէն բանական իրական է, եւ ամէն իրական՝ բանական»[14]*: Պատմագիտութեան առարկայական մօտեցումը ենթադրում է նաեւ ընկերային եւ քաղաքական բաղադրիչների միակցութիւն:*

Պողիւբիոսը դատողութիւններ է անում պատմական իրադարձութիւնների ու դրուագների օրգանական կապի, նոյնիսկ՝ օրինաչափութիւնների մասին: Ըստ այս երկու հեղինակների հայեցակարգային մօտեցումների՝ քանի որ մարդկային բնութիւնը (*էութիւնը*) *անփոփոխ է, ուստի այդ կայունութեան հետեւանքով պատմական երեւոյթներն ու իրադարձութիւնները,* «պայմանաւորուած մարդկային բնոյթով՝ ի զօրու են ապագայում կրկնուելու»[15]*: Բայց, յիշելով Թաղէս Միլետացուն (Ք.ա. Զ. դար) կամ նրա աշակերտ Հերակղիտոսին* (Heraclitus) *վերագրուող իմաստնական օրէնք դարձած խօսոյթը՝* «նոյն գետը երկու անգամ չես մտնի»[16]*, բացառւում է դրանց նոյնութեամբ կրկնուելը:*

Պատմական հայեացք նետելով անցեալին՝ հարկ է արձանագրել, որ պատմութեան հետազօտման մեթոդաբանութիւնն *ի յայտ է եկել այն ժամանակ, երբ մարդկանց մօտ, իբրեւ հեռու եւ մօտիկ անցեալի յիշողութիւն, բնական անհրաժեշտութիւն է առաջացել փորձել* համակարգուած շարադրել*, իմաստաւորել պատմութիւնը, որտեղից էլ, կարելի է ասել, ձեւաւորուել է պատմութիւնը՝ իբրեւ* գիտութիւն*: Ինքնին հասկանալի է, որ բուն պատմութիւնն իր իրադարձութիւններով, գործընթացներով, դրուագներով, դէպքերով ու դէմքերով, ժամանակագրական առումով աւելի հին է, քան պատմագրութիւնը, ուստիեւ՝ դրա ուսումնասիրման գործիք հանդիսացող պատմութեան մեթոդաբանութիւնը:*

13 Ն. Մաշկին, *Հին Հռոմի պատմութիւն*, Երեւան, ԵՊՀ հրտ., 1951, էջ 23, նաեւ՝ *Հին Յունաստանի պատմութիւն*, Վ. Ավդիեւ, (խմբ.), Երեւան 1982, էջ 39:
14 Г. В. Гегель, *Энциклопедия философских наук (философия духа)*, т. I, М., изд. «Мысль», 1974, с. 89.
15 Фукидид, *История*, т. I, кн. 1, гл. 22, с. 14; *Большая Советская энциклопедия (БСЭ)*, Гл. ред. Введенский Б. А., т. 45, 2-ое изд., М. 1956, с. 632.
16 http://www.allbest.ru եւ https://m.facebook.com>posts (առ. 31.03.24):

Պողիւբիոսն իր աշխատութեան մէջ յաճախ անդրադառնում է պատմութեան շարադրման իւրայատուկ կողմերին ու գծերին։ Ասենք, ի տարբերութիւն Հերոդոտոսի, Արիստոտէլի եւ միւսների, ովքեր քերթուածը (պոէզիա) դասում էին պատմութիւնից բարձր, քանի որ քերթուածում աւելի շատ է խօսւում ընդհանուրից, իսկ պատմութիւնում՝ եզակիներից, նա պատմութիւնը հակադրում էր քերթողութեան սեռերին, օրինակ՝ ողբերգութեանը (տրագեդիային) եւ տալիս հետեւեալ մեկնաբանութիւնը. «Պատմաբանի խնդիրը նրանում չէ,– *գրում էր Պողիւբիոսը,*– որպէսզի պատմելով հրաշագործ բաների մասին՝ ընթերցողին ներշնչի սարսափ, եւ ոչ նրանում, որ, որպէսզի նկարագրելով ճշմարտանման պատմութիւններ եւ նկարագրուող իրադարձութիւններում նշի բոլոր երկրորդական (կողմնակի) հանգամանքները, ինչպէս որ վարւում են ողբերգութիւն գրողները, այլ նրանում, որ ստոյգ հաղորդի միայն այն, որ իրականում ասուել կամ արուել է, որքան էլ որ այն անսովոր լինի։ Պատմութեան եւ ողբերգութեան նպատակները նոյնը չեն, ընդհակառակը՝ հակադիր են։ Մի դէպքում պահանջւում է լսողներից ճշմարտանման ելոյթներով տուեալ պահին ունկնդիրների մօտ առաջ բերել զարմանք եւ հիացմունք, մինչդեռ պատմութիւնից պահանջւում է հետաքրքրասէր մարդկանց տալ ճշմարիտ գրութիւնների եւ խօսքերի լիակատար (յուսալի) դասեր ու խրատներ (պատգամներ)։ Այն պարագայում, երբ ողբերգութիւն գրողների համար գլխաւորը ճշմարտանման խօսոյթներով հանդիսատեսին մոլորեցնելն է, ապա պատմաբաններինը՝ գլխաւորը հետաքրքրասէր ընթերցողին օգուտ բերել՝ ճշմարիտ պատմութեան շարադրմամբ»[17]։

Ի տարբերութիւն հռետորաբանների՝ Պողիւբիոսը պատմագրութեան միակ չափանիշը համարում էր ճշմարտութիւնը։ *Պատմիչ-պատմաբանների կողմից իրենց շարադրած պատմութեան ճշմարտացիութեան արժէքը որոշելու համար Պողիւբիոսը մէջ է բերել մեր ժամանակներում հանրայայտ դարձած խօսոյթը, որ* «Մէկ կաթիլով կարելի է իմանալ վիթխարի տակառի ամբողջ պարունակութեան մասին»[18]։ *Եւ, ըստ նրա, նոյն կերպ պէտք է վարուի պատմաբանը։* «Եթէ որեւէ հեղինակի երկում յայտնաբերւում է մէկ-երկու անճշտութիւն, առաւել եւս, եթէ անճշտութիւնը (սխալը) թոյլ է տրուել դիտաւորեալ (կանխամտածուած) կերպով, ապա ակնյայտ է

17 Полибий, նշ. աշխ., հտ. II, գիրք 2, գլ. 56, с. 198:
18 *«По одной капле можно узнать все содержимое огромнейшей бочки»* (Полибий, նշ. աշխ., հտ. II, գիրք 25, գլ. 25а, с. 381):

դառնում, որ այլեւս չի կարելի յենուել նման հեղինակի եւ ոչ մի խօսքին (բառին)»[19]։

Պողիւբիոսի պատկերմամբ՝ պատմութեան արժանիքը մեծապէս կախուած է այն գրող (ներկայացնող) պատմաբանի յատկութիւններից, ունակութիւններից, պատրաստուածութիւնից եւ այլն։ Պատմաբանի նպատակը պիտի լինի ոչ թէ փաստերի պարզ շարադրումը, այլ փորձել բացայայտել տեղի ունեցած երեւոյթների՝ եղելութիւնների, դէպքերի ու իրադարձութիւնների իրական ու խորքային պատճառները։ «Պատմութեան իսկական խնդիրը առաջին հերթին է,– *գրում էր հեղինակը,*– իմանալ (հասկանալ) իրականում հնչեցրած խօսքը, ինչպիսին էլ որ դա լինի, այնուհետեւ փնտռել այն պատճառները, որոնցով տուեալ ձեռնարկը կամ խօսքը լուծուել է յաջողութեամբ կամ անյաջողութեամբ»[20]։ *Պողիւբիոսի ընդգծմամբ՝ պատմութեան ընթերցումն օգտակար է դառնում այն ժամանակ, երբ շարադրանքում բացայայտւում ու պարզաբանւում է իրադարձութեան պատճառը։* «Ով լուրթեան է մատնում իրադարձութեան վերաբերեալ հնչեցուած խօսքի պատճառը, իսկ դրա փոխարէն տալիս է մտացածին դպրոցականի վարժանքներ ու երկար ճամարտակութիւններ, դրանով նա վերացնում է պատմութեան բուն գոյութիւնը»[21]։ *Նա ենթադրում էր, որ պատմական իրադարձութեան պատճառը փնտռելը, գտնելը աւելի դժուար է, քան գրական կամ հրապարակային ելոյթի համար խօսք* (ճառ) *պատրաստելը։ Բացի այդ, նրա դիտարկմամբ՝ շատ քչերն են կարճ ելոյթ ունենում, ընդհակառակը՝ հանդիպում են ընդարձակ ու աննպատակ ելոյթներ* (ճառեր)[22]։ *Եւ այդ իմաստով նա կշտամբում էր շատախօս հռետորճարտասաններին։ Այդպիսիք, ի դէպ, մեր ժամանակներում եւս քիչ չեն։*

Պողիւբիոսը նմանութիւն ու ընդհանրութիւն է տեսնում պատմութիւն գրողի *եւ* բուժող բժշկի *միջեւ։ Պատմութեան հոլովոյթում պատմագրի գլխաւոր նպատակը* (խնդիրը) *պիտի համարուի ուղղակի եւ անուղղակի ճանապարհով ձեռք բերուած փաստերի ու փաստաթղթերի քննութեամբ ու վերլուծութեամբ անցեալի իրական պատմութեան, ճշմարտութեան բացայայտումը,*

19 Полибий, նշ. աշխ., հտ. II, գիրք 25, գլ. 56, с. 382:
20 Անդ, գլ. 25в, с. 382:
21 Անդ, գլ. 25в, с. 382-283:
22 Անդ, գլ. 25и, с. 389:

համեմատական առումով, ինչպիսին առողջապահութեան ոլորտում բժշկինը՝ հիւանդի աշխատորոշման ու բուժման գործողութեան, կամ էլ նոյնիսկ իրաւագիտութեան ու իրաւունքի ոլորտում՝ դատաւորինը, դատավարութեան ու դատավճռի կայացման գործում։ Ընդ որում՝ պատմութիւն գրելը եւ մարդ բժշկելը, ըստ Թուկիդիդէսի, բաժանւում են երեք տեսակի՝ իրենց համապատասխան նախանշաններով։ Եթէ բժշկութեան պարագայում առկայ են ա) գրքային՝ նկատի է ունեցել Աղեքսանդրիա քաղաքի գրականութիւնը, բ) սննդային (դիետիկ) եւ գ) դեղագործական ու վիրահատական փուլեր, ապա քաղաքական պատմութեամբ զբաղուողը պիտի ա) ծանօթանայ հետազօտուող թեմային վերաբերող պատմական երկերին, դրանցից դուրս բերի անհրաժեշտ բովանդակութեամբ ու քանակութեամբ նիւթեր, բ) ծանօթանայ երկրների քաղաքներին, գետերին, նաւահանգիստներին, առհասարակ ցամաքային ու ծովային տեսարժան վայրերին եւ գ) ուսումնասիրի պետական (քաղաքական) իրադարձութիւններն ու կեանքը[23]։

Պողիւբիոսը զանազանել է պատմական երեւոյթների ու գործընթացների երեք տարրեր՝ երեւոյթի, եղելութեան, իրադարձութեան կամ հանգամանքի ա) պատճառը, բ) առիթը եւ գ) սկիզբը[24]։ Եւ այդ երեքից, նրա պատկերմամբ՝ իրաւացիօրէն առաջնայինը համարւում է պատճառը, որ կարող է պայմանաւորուած լինել առարկայական եւ ենթակայական հանգամանքներով։ Այստեղ նա նոյնիսկ տարբերակել է առարկայական եւ ենթակայական գործօնների դերը[25]։ Հարկ է նկատել, որ այս հանգամանքը կարեւորւում է անգամ մեր ժամանակներում։ Բանն այն է, որ պատմութիւն ընթերցող հանրութիւնը, նոյնիսկ սկսնակ պատմաբանները երբեմն դժուարանում են իրարից յստակ զանազանել պատմական այս կամ այն իրադարձութեան պատճառն ու առիթը։ Այսպէս՝ մեր ժամանակներում յաճախ կարելի է հանդիպել առանձին մարդկանց, որոնք, օրինակ, Առաջին աշխարհամարտի պատճառը փորձում են բացատրել Աւստրո-Հունգարիայի թագաժառանգ Ֆրանց Ֆերդինանտի ահաբեկչական սպանութեան հետ՝ տուեալ դէպքում առիթը շփոթելով բուն պատճառների հետ եւ այլն։

23 Անդ, գիրք 12, գլ. 25в, с. 383-384:
24 Անդ, հտ. I, գիրք 3, գլ. 6-7, с. 248-251, նաեւ՝ հտ. II, գիրք 12, գլ. 25с, с. 382-383:
25 Полибий, նշ. աշխ., հտ. I, գիրք 3, գլ., 6-7, с. 248-251, նաեւ՝ հտ. II, գիրք 12, գլ. 25с, с. 382-383:

Պատերազմի պատճառի, առիթի եւ սկսելուն հարցը քննելիս, օրինակ, Աղեքսանդր Մակեդոնացու մեծ արշաւանքի հետ կապուած, Պողիւբիոսը քննադատում է այն հեղինակներին, ովքեր պատճառ էին համարում Աղեքսանդրի զօրքերի ափհանումը Փոքր Ասիա[26]։ Մինչդեռ իրականում պատերազմի պատճառները պիտի փնտռել յոյն-պարսկական նախորդ պատերազմներում՝ իբրեւ փոխվրէժ, Յունաստանի կրած վնասների ու մարդկային կորուստների, Աթէնքի հրդեհման եւ այլնի, իսկ միգուցէ՝ Աղեքսանդր Մեծի համաշխարհային գերիշխանութեան յաւակնութիւնների հետ։ Մեծ պատերազմին նախապատրաստուելը, զինուելը սկսուել էր դեռ Աղեքսանդրի հօր՝ Մակեդոնիայի թագաւոր Փիլիպպոս Բ.ի ժամանակ։ Մէջբերենք Պողիւբիոսից. «Կան մարդիկ, որոնք չեն զանազանում, թէ որն է սկիզբը, ինչով է այն տարբերւում պատճառից ու առիթից»[27]։ Պողիւբիոսի մտայանգմամբ՝ Աղեքսանդրի Ասիա մայրցամաք ափհանումը ոչ թէ պատերազմի պատճառ էր, այլ առիթ ու գործնականում՝ սկիզբ[28]։ Աւելին, սոյն աշխարհացունց պատերազմի պատճառների մասին խօսելիս՝ Պողիւբիոսը խօսում է նաեւ ընդհանրապէս պատերազմ կազմակերպելու մտադրութեան, որոշում կայացնելու, ռազմական նախագիծ մշակելու եւ այլնի մասին։ Այդ հարցում նա կարեւորում էր նաեւ մարդկանց հոգեբանական տրամադրուածութիւնը, կողմերի հաշուարկներ անելը եւ համանման այլ անելիքները[29]։ Պողիւբիոսը, յղում անելով Հին յունական հռետոր Հերմոգրատէսից (Hermocrates), համեմատութիւն էր անցկացնում պատերազմի եւ խաղաղութեան միջեւ՝ պատերազմը նմանեցնելով քաղաքական հիւանդութեան, իսկ խաղաղութիւնը՝ առողջութեան հետ[30]։ Դժուար չէ նկատել, որ պետական ու ռազմական այս գործիչը պատերազմի եւ խաղաղութեան հարցում դատողութիւններ էր անում գրեթէ ժամանակակից չափանիշներով։

Պողիւբիոսը պատճառի ի յայտ գալը փնտռում եւ տեսնում էր տուեալ իրադարձութեան ներսում եւ ոչ թէ՝ այդ երեւոյթից դուրս։ Եւ պատահական չէ, որ նա համարւում է պատմագրութեան մէջ պառճառահետեւանքային կապի մասին պատկերացումների հիմնադիր[31]։

26 Полибий, նշ. աշխ., հտ. I, գիրք 3, գլ. 6, с. 250:
27 Անդ, с. 249:
28 Անդ, с. 250:
29 Անդ:
30 Անդ, հտ. II, գիրք 12, գլ. 26, с. 392:
31 А.Б. Соколов, *История исторической науки*. 2-е издание, М., изд. «Юрайт», 2018, с. 17.

Պողիւբիոսը պատերազմների պատճառահետեւանքային կապի մասին խօսում եւ դատողութիւններ է անում առաջին հերթին Երկրորդ Փիւնիկեան պատերազմի օրինակով[32]*։ Մասնաւորապէս, հետաքրքիր է նրա մօտեցումը պատերազմի այս կամ այն իրադարձութեան պատճառի բացայայտման հարցին։ Նկատի ունենալով, որ միեւնոյն իրադարձութեան վերաբերեալ տարբեր հեղինակներ յաճախ տարբեր կարծիք են յայտնում ու դրանից բխող տարբեր մեկնաբանութիւն ու գնահատական տալիս՝ նա, իբրեւ պատմագիտական մեթոդ, գտնում էր, որ տուեալ իրադարձութեան, ասենք՝ պատերազմից ստացուած* արդիւնքով, *այսինքն՝* հետադարձ դիտարկման (ռետրոսպեկտիվ) *մեթոդով կարելի է բացայայտել դրա պատճառը կամ պատճառները։ Սա հետազօտման այն ձեւն է, երբ պատմաբանն իրադարձութեանը հետեւում է հակառակ դիտակէտից՝ վերջնարդիւնքից, հետեւանքից դէպի իրադարձութեան ակունքը, պատճառը, սկիզբը։ Այսինքն՝ այդ մեթոդը հնարաւորութիւն է տալիս յետադարձ հայեացք ձգելով կատարուած գործընթացին հակառակ ուղղութեամբ՝ առարկայօրէն նկատել ու պարզել շրջադարձային կարեւոր պահերը, ինչը յանգեցրել է պատմական նման վերջնարդիւնքի՝ դրական թէ բացասական իմաստով։*

Տուեալ դէպքում, Կարթագինէի հանդէպ Հռոմի յաղթանակի արդիւնքով Սիկիլիայի ձեռքբերումը, գործնականում Միջերկրականին տիրանալը, աւելին, յանձին Սկիպիոն Ափրիկանոս Աւագի ժառանգորդ եւ նրա քաղաքական գծի հետեւորդ Էմիլիանոս Ափրիկանոս Կրտսերի (Aemilianus Africanus Minor)՝ *Ափրիկէ ներխուժումը եւ Ն.Ք. 146-ին Կարթագինէի հիմնայատակ կործանումը ինքնին Փիւնիկեան պատերազմների ծագման պատճառների խօսուն վկաներն են։ Այսպէս, սա կարելի է դիտել Պողիւբիոսի կողմից առաջ քաշուած մեթոդաբանական մի հնարք, երբ տուեալ իրադարձութեան վերջնարդիւնքով կարելի է կռահել ու պարզել տեղի ունեցածի ծագման ու առաջացման պատճառը, ընթացքը եւ այլն։*

Հին աշխարհի պետական, քաղաքական կամ ռազմական գործիչներին գնահատելիս՝ Պողիւբիոս պատմագիրը, վերլուծաբան-մեթոդաբանը գտնում էր, որ «Պատմաբանը պէտք է զգուշանայ անչափաւորութիւնից՝ ինչպէս դատապարտումներում, այնպէս էլ գովերգումներում»[33]*։ Պողիւբիոսի դիտարկմամբ՝ պետական ու ռազմա-*

32 Полибий, նշ. աշխ., հտ. I, գիրք 3, գլ. 6-7, с. 248-251:
33 Полибий, նշ. աշխ., հտ. II, գիրք 12, գլ. 15, с. 371:

կան գործիչների կենսագրութիւնը եւ, առհասարակ, պատմութիւնը շարադրելիս պատմաբանը պարտաւոր է գիտակցել, որ «Պատմաբանի պարտաւորութեան մէջ է մտնում՝ սերնդին հաղորդել ոչ միայն այն, որ ծառայում է մարդուն վարկաբեկելուն եւ դատապարտելուն, այլ նմանապէս այն, ինչն արժանի է գովասանքի. հէնց դրանում է կայանում պատմաբանի իսկական (իրական) խնդիրը»[34]*։*

Ինչպէս արդէն ասուեց՝ Պողիւբիոսը պատմաբանի համար պարտադիր պայման էր համարում պատմութիւնը ճշմարիտ *ներկայացնելը։* «Պատմաբանի խնդիրը նա չէ,- *գրում է Պողիւբիոսը,-* ինչի մասին նկարագրելով՝ ընթերցողի մօտ հրճուանք կամ սարսափ առաջացնի եւ կամ նրանում չէ, որ ճշմարտանման հէքիաթներ հնարի, այլ ճշմարիտ ներկայացնի այն, ինչն իրականում տեղի է ունեցել, որքան էլ որ այն անսովոր լինի»[35]*։ Պատմութեան մատուցման հարցում նրա բառացի բանաձեւումն այն էր, որ այն, ինչը* ճշմարիտ *չէ, կը նշանակի՝ սուտ է ու* կեղծիք*։ Ըստ նրա՝* «պատմութեան մէջ չկայ աւելի մեծ թերութիւն (բաց), քան սուտը (կեղծիքը)»[36]*։* «Պատմական երկը,- *շարունակում է նա,-* չի կարելի կոչել պատմութիւն, եթէ նրանում խախտուած է ճշմարիտ լինելու պահանջը»[37]*։ Պողիւբիոսը պատկերաւոր համեմատութիւն է անում այն մասին, որ պատմութիւնից ճշմարտութիւնը հանուելու դէպքում այն նմանւում է* տեսողութիւնը կորցրած կենդանի էակի, *եւ դրանով իսկ պատմութիւնը վերածւում է դատարկ ճամարտակութեան*[38]*։ Բայց եւ միաժամանակ՝ նա տարբերակում է անում, քանի որ պատմաբանի կողմից թոյլ տրուած սխալը լինում է երկակի՝* անտեղեակութիւնից *կամ* կանխամտածուած*։ Ուստի մոլորուած պատմիչ-գրողների հանդէպ պէտք է ցուցաբերուի* ներողամտութիւն, *իսկ դիտաւորեալ ու կանխամտածուած անճշտութիւնը կամ սուտը պէտք է մերկացուի եւ անխնայ* դատապարտուի[39]*։ Մէկ այլ տեղ էլ այս նոյն առնչութեամբ գրում է, որ* «սխալը հարկաւոր է բարեմտօրէն ուղղել (շտկել), իսկ դիտաւորեալ սուտը՝ անխնայ մերկացնել»[40]*։*

Բացի այդ, Պողիւբիոսի դիտարկմամբ՝ կան պատմաբաններ, ովքեր քիչ նշանակալի, նոյնիսկ յիշատակման ոչ այնքան արժանի իրադարձութիւնը ինչ-ինչ նկատառումներով գերագնահատում են։

34 Անդ, с. 371-372:
35 Անդ, գլ. 56, էջ 198:
36 Անդ, գիրք 12, գլ. 11, с. 367:
37 Անդ:
38 Անդ, գլ. 12, с. 367, նաեւ՝ հտ. I, գիրք 1, գլ. 14, с. 26:
39 Полибий, նշ. աշխ., հտ. II, գիրք 12, գլ. 12, с. 367-368:
40 Անդ, գիրք 11, գլ. 7, с. 363:

Դա միգուցէ կարող է հետաքրքիր լինել սովորական ընթերցասերներին, բայց իրական ու ճշմարիտ պատմութեան համար՝ ոչ պիտանի (անօգտակար)[41]*։ Նոբելեան մրցանակակիր գերմանացի պատմաբան Թէոդոր Մոմզէնը* (1817-1903)*, շատ մտքեր ու մեթոդական մօտեցումներ ու գործիքակազմեր ուսանելով Պողիւբիոսից՝ նշում էր, որ իրօք,* «Պատմաբանը չպիտի տանջի իր ընթերցողին անսովոր (արտասովոր) իրադարձութիւնների մասին պատմութիւններով»[42]*։ Հռոմի պատմութեանը նուիրուած Պողիւբիոսի գործին բնորոշ տիպաբանական որոշ հարցեր շարունակող Մոմզէնը նկատել է տալիս, որ Պողիւբիոսի խնդրոյ առարկայ աշխատութիւնը ներծծուած է ընդդիմադիր բանավիճային ոգով ու ոճով*[43]*։*

Վերը նշուածներից զատ՝ Պողիւբիոսն ընդգծում էր նաեւ պատմական փորձի կարեւորութիւնը։ Օրինակ, նա Փիւնիկեան պատերազմների փորձով դատողութիւններ էր անում, որ «Ճշմարիտ կեանքի համար մեզ ծառայում է ճշմարիտ պատմական իրադարձութիւնների *փորձը* (*ընդգծումը մերն է – Ա. Հ.*)։ Քանի որ միայն նա առանց վնասի մարդկանց դարձնում է անսխալական դատաւորներ բոլոր ժամանակներում եւ ցանկացած դրութեան մէջ»[44]*։*

Ինչպէս տեսնում ենք՝ Պողիւբիոսի պատմագիտական ու մեթոդաբանական մօտեցումներում ու դատողութիւններում պատմութիւն գրող հեղինակների առջեւ դրուած գլխաւոր (առաջնային) պահանջն էր՝ առաջնորդուել ճշմարտութեամբ եւ ընթերցող հանրութեանը ներկայացնել իրական, չիտակ ու ճշմարիտ պատմութիւն։

Բ. ՊՈՂԻՒԲԻՈՍԸ՝ ՊԵՏԱԿԱՆՈՒԹԵԱՆ ԳԱՂԱՓԱՐԻ ՄԱՍԻՆ[45]

Պատմագիր Պողիւբիոսի աշխատութիւնում պատմութեան մեթոդաբանութեան առանցքը ստուգաբանական առումով կազ-

41 Անդ, c. 99:
42 Т. Моммзен, նշ. աշխ., т. I, М., «Гос. издать», 1936, с. 229.
43 Т. Моммзен, նշ. աշխ., т. II, М., «Гос. издать», 1937, с. 423.
44 Полибий, նշ. աշխ., հտ. I, գիրք 1, գլ. 14, с. 53-54:
45 Հարկ ենք համարում տեղեկացնել, որ Պողիւբիոսի կողմից պետութեան տեսութեան առանձին հարցերի լուսաբանմանը անդրադարձել է պրոֆ. Ա. Ստեփանեանն իր *«Պատմութեան հետագիծը»*, Երեւան 2014, մենագրութեան էջ 212-235-ում: Այստեղ, չկրկնելով հեղինակին, մենք փորձ ենք արել աւելի շատ շեշտը դնել պատմագիր-փիլիսոփայի մեթոդական բնոյթի հարցերի վրայ:

մում է քննական ու վերլուծական մօտեցումը, եւ դա առաջին հերթին վերաբերում է քաղաքական պատմութեանն՝ ընդհանրապէս, իսկ պետականութեան *ինստիտուտին՝ մասնաւորապէս։ Նա յատուկ ընդգծում էր պետականութեան նշանակութիւնը։* «Ինչպիսի ձեռնարկում էլ որ արուի, նրա յաջողութեան եւ անյաջողութեան կարեւորագոյն պատճառը պէտք է համարել *պետական կառուցուածքը* (*ընդգծումը մերն է – Ա. Հ.*)։ Իրրեւ սկզբնաղբիւր՝ դրանից են կախուած բոլոր ձեռնարկումների մտքերն ու ծրագրերը, նրանից է կախուած նաեւ դրանց իրագործումը»[46]*։ Պետականութեան հարցում Պողիւբիոսի առաջ քաշած գաղափարներից է այն, որ պետութեան զարգացումը տեղի է ունենում փուլերով, որ հասարակութեան զարգացմանը զուգընթաց այն երթարկւում է լուրջ փոփոխութիւնների՝ փոխւում են կառավարման ձեւը, բովանդակութիւնը, եղանակները, նպատակները, խնդիրները եւ սոցիալական ուղղուածութիւնը։ Պետութեան բնոյթի եւ պետական կառուցուածքի վրայ, անշուշտ, ազդում են աշխարհագրական դիրքն ու պայմանները, բնակչութեան ազգային կազմը, մշակութային առանձնայատկութիւնները, կրօնական հայեացքները, ժողովրդի սովորոյթները եւ այլ գործօններ։*

Այդ իմաստով Պողիւբիոսի ուշադրութեան կենտրոնում էր Հռոմի պետութիւնը։ Նրա մեկնաբանութեամբ՝ նախկին պատմագիրների ու փիլիսոփաների մեծամասնութիւնը տարբերակել են պետական կառուցուածքի երեք ձեւեր։ *Դրանցից առաջինը համարւում է* թագաւորական, *միւսը՝* ազնուապետական (*արիստոկրատական*) *եւ երրորդը՝* ժողովրդավարական (*դեմոկրատական*) *պետութիւններ*[47]*։ Նա լաւագոյնը համարում էր այդ երեքի համադրումը, զուգակցումը կամ խառը կառավարումը։ Նա պետական կառուցուածքի այդ երեք ձեւերն իրենց հերթին տրոհել է կառավարման լրացուցիչ բաղադրիչների։ Այսպէս՝ թագաւորութեան տեսակում նա զանազանում է սովորական* միապետութիւնը, *որն առաջնորդւում է օրէնքներով, եւ* բռնապետութիւնը (*տիրանիան*), *որում չեն գործում օրէնքները, եւ ամէն ինչ պայմանաւորուած է բռնապետի կամքից։ Նա նկատել է տալիս, որ սովորաբար* թագաւորական *իշխանութիւնը հակում ունի կերպափոխուելու (վերածուելու) բռնապետութեան։ Նա* ազնուապետական *փոքրամասնութիւն կազմող*

46 Полибий, նշ. աշխ., հտ. II, գիրք 6, գլ. 1, с. 3:
47 Անդ, գլ. 1, с. 6:

պետութիւնը տարբերակում է աւելի նեղ ու խմբային հանդիսացող՝ սակաւապետական (օլիգարխիկ) կառավարման ձեւից, թէեւ վերջիններս, թւում է՝ իրար նման են։ Նոյնը ասւում է ժողովրդավարական կառավարման պարագայում, որտեղ ժողովրդական զանգուածների մասնակցութեամբ, բաց ու հրապարակային, օրէնքներով գործող կառավարման ներսում կարող է առաջանալ անկառավարելիութիւն, որ ժամանակի ընթացքում ծնում է ամբոխապետութիւն (օխլոկրատիա)[48]։ Եւ, Պողիւբիոսի կարծիքով, բնութեան օրէնքով պետական կառավարման ձեւերի նման կերպափոխումներ (տրանսֆորմացիաներ) տեղի են ունեցել թէ՛ Յունաստանում եւ թէ՛ Հռոմում։

Պողիւբիոսը պետական կառավարման ձեւերի հարցում, օրինակ, կատարում է նաեւ հետեւեալ պարզաբանումները։ Այսպէս՝ թագաւորական իշխանութեան պարագայում թագաւորն իր բարի կամքով սովորաբար զիջում է իր իշխանութիւնը, եւ այդ երկրում իշխում է ոչ թէ վախը, այլ՝ բանականութիւնը։ Կամ ոչ բոլոր փոքրամասնութիւնների կառավարումը կարելի է համարել արիստոկրատական, երբ կառավարող մարդիկ ընտրութիւն կատարելիս լինում են արդարամիտ ու դատող։ Նոյն կերպ, ժողովրդավարական կառավարում չի կարելի կոչել այն, երբ ժողովրդական զանգուածները փորձում են անել իրենց մտածածն ու ցանկացածը։ Իրականում ժողովրդավարական համարուող պետութիւնում պարտադիր կարգով հաշուի են առնւում երկրի ու ժողովրդի վաղնջական սովորոյթները, ուր փայփայւում են հարազատները, յարգւում են աւագները, մարդիկ հնազանդւում են օրէնքներին, իսկ որոշումներ (վճիռներ) կայացնելիս՝ վճռական խօսքը պատկանում է ժողովրդի մեծամասնութեանը եւ այլն[49]։

Պողիւբիոսը խառը կառավարման վերաբերեալ նման դատողութիւնների հիմքում ունեցել է Պղատոնի, Արիստոտէլի եւ ուրիշ այլ փիլիսոփաների մօտեցումները, որոնք նա զարգացրել է իր դարաշրջանի էութեանը համապատասխան։ Եւ, ի յաւելումն ասուածի՝ նա փորձել է այդ մտքերը շարադրել յստակ ու մատչելի կերպով[50]։ Յամենայն դէպս, պետական խառը կառավարման մէջ, կառուցուածքի ու ձեւի տեսակէտից, սկզբունքօրէն մերժելով բռնապետութիւնը (տիրանիան), նա նախապատուութիւնը տալիս էր

48 Անդ, գլ. 4, c. 7-8։
49 Անդ, c. 8։
50 Անդ, գլ. 5, c. 8։

երկու՝ ազնուապետական եւ ժողովրդավարական կառավարման խառը ձեւերին։ Պողիւբիոսը Հռոմի պետութիւնը համարում էր պետականութեան կատարելատիպ, որն ընդունակ էր իշխել աշխարհի վրայ[51]։ Ուստի իր աշխատութեան երկրորդ հատորի 18-42 գլուխներում նա հանգամանօրէն խօսում է Հռոմի պետական կառուցուածքի առաւելութիւնների, ընտրական համակարգի եւ գործող օրէնքների արդիւնաւետութեան մասին[52]։ Ի դէպ, նա ազգութեամբ լինելով տոհմիկ յոյն՝ Աքայական միութեան 168 թուականին Հռոմից կրած պարտութիւնից յետոյ, ի թիւս հազար պատանդների, բերուել է Իտալիա եւ այդուհետ հաւատարմօրէն ծառայել Հռոմին։

Պողիւբիոսի աշխատութեան ուշագրաւ արժանիքներից է նաեւ այն, որ նա, առաջնորդուելով բնափիլիսոփայութեամբ, փորձել է բացայայտել պետականութեան կառոյցի ու մարդկանց համակեցութեան ծագման ակունքները։ Նա դատողութիւններ է անում այն մասին, որ մարդկային ցեղը վերացել է ջրհեղեղներից, համաճարակներից, երաշտներից կամ ուրիշ այլ աղէտների պատճառով, ինչը քանիցս կրկնուել է մարդկութեան վաղ անցեալում եւ, բնականաբար, մարդկանց հետ միասին ոչնչացել են նաեւ նրանց ստեղծած բոլոր կառոյցներն ու արուեստը։ Բայց, ժամանակի ընթացքում, մարդկանց մի փոքր մասը, ըստ նրա, կարողացել է փրկուել, եւ նրանցից կրկին բազմացել են որոշակի թուով մարդիկ։ Նման դէպքում նրանք, ինչպէս բոլոր կենդանի էակները, իրենց թուլութիւնն ու անօգնականութիւնը յաղթահարելու նպատակով համախմբուել են՝ կազմելով միասեռ զանգուած, իսկ նրանցից մէկը, ով միւսներին գերազանցում էր իր ֆիզիկական ուժով ու մտաւոր կարողութեամբ՝ դարձել է առաջնորդ եւ իշխող[53]։

Այդ համեմատութիւնը նա անում է՝ բնութիւնից վերցնելով գոմէշների, վարազների, աքլորների եւ այլ կենդանիների օրինակը, երբ դրանցից առաւել ուժեղն անպայման դառնում է առաջնորդ[54]։ Այսինքն, նրա ձեւակերպմամբ՝ մարդկանց միջավայրում եւս իշխանութեան ակունքը հանդիսանում է ուժը, որ տանում է դէպի կառավարման մենիշխանութիւն (թագաւորութիւն)։ Ուշա-

51 Полибий, նշ. աշխ., հտ. II, գ. 6, գլ. 49-50, с. 59, նաեւ՝ С.Б. Мирзаев, *Полибий*, М., «Юурид. лит.», 1986, с. 38 и 56-57։
52 Полибий, նշ. աշխ., հտ. II, գիրք 6, գլ. 18-42, с. 24-50։
53 Անդ, գլ. 5, с. 9։
54 Անդ։

գրաւ է, որ Պողիւբիոսը, նման մեկնաբանութիւններ անելով, չի խօսում մարդկանց ծագման եւ իշխանութեան առաջացման ինչ-որ ոգու, արարչագործութեան, գերբնական-աստուածային ուժերի ներգործութեան մասին։ Նա, օրինակ, նման նկարագրով է պատկերում Հին Հռոմի պետութեան (թագաւորութեան)՝ ն.թ. 753 թուականին առաջացումը։ Հին աշխարհի պատմութեան առանցքային մի պետութիւն, որի մայրաքաղաքի՝ Հռոմի հիմնադրման տարեթիւը 31 տարով հետ է Հայոց Այրարատեան (Վանի, Ուրարտուի) թագաւորութեան Արգիշտի Ա. արքայի հիմնած Էրեբունի-Երեւան հիւսիսային մայրաքաղաքից[55]։

Այդուհանդերձ, Պողիւբիոսի կողմից պետութեան ծագման վերաբերեալ բերուած նկարագրութիւններից մեր ստացած ընդհանուր տպաւորութեամբ՝ չի բացառւում, որ մարքսիզմի հիմնադիրներից Ֆ. Էնգելսն իր յայտնի աշխատութիւնը[56] պատրաստելիս, այլ աշխատութիւններից եւ ազգագրական նիւթերից զատ, օգտուած լինի նաեւ Պողիւբիոսի սոյն աշխատութիւնից, մանաւանդ, որ նա առանձին ենթավերնագրերով հանգամանօրէն խօսում է տոհմատիրական հասարակութեան քայքայման եւ աթենական ու հռոմէական պետութիւնների առաջացման մասին[57]։

Խօսելով պետականութեան գաղափարի մասին՝ Պողիւբիոսը արձանագրում է իր ժամանակուայ Հռոմէական Հանրապետութեան իշխանութեան թեւերի տարանջատուածութիւնը՝ մասնաւորապէս Ծերակոյտի (Սենատի), կոնսուլների եւ ժողովրդական ժողովների միջեւ։ Ըստ նրա՝ վերջիններիս կամքի արտայայտողն ամէնից առաջ հանդիսացել է տրիբունը[58]։ Պողիւբիոսի պատկերմամբ՝ կոնսուլը չէր կարող առանց Ծերակոյտի եւ ժողովրդի գի-

55 Ա. ՅԱԿՈԲԵԱՆ, *Հայոց պատմութիւն*, «Տնտեսագէտ» հրտ., Երեւան 2022, էջ 27:

56 Ֆ. ԷՆԳԵԼՍ, *Ընտանիքի, մասնաւոր սեփականութեան եւ պետութեան ծագումը*, «Պետհրատ», Երեւան 1940:

57 Անդ, էջ 128-150:

58 Գոյութիւն են ունեցել բաղաքացիական եւ զինուորական տրիբուններ (հռետորներ)։ Վերջիններս թուով 24-ն էին, որոնց մի մասն ընտրւում էր առնուազն հնգամեայ, իսկ միւսը՝ տասնամեայ զինուորական (հեծեալ եւ հետեւակ) արշաւանքներին մասնակցելու պարագայում։ Հետաքրքիր եւ արդիական առումով հնչեղ է այն դրոյթը, որ պետական պաշտօններ կարող են զբաղեցնել միայն այն անձինք, ովքեր մասնակցութիւն են ունեցել տասնամեայ արշաւանքներին (ПОЛИБИЙ, նշ. աշխ., հտ. II, գիրք 6, գլ. 19, с. 25)։

տութեան ինքնագլուխ զօրարշաւ կազմակերպել կամ պայմանագիր կնքել, որովհետեւ Լեգէոնները (մէկ լեգէոն = 4.200 հետեւակ եւ 300 հեծեալ զինուոր) վճարուած էին Ծերակոյտի կողմից (Ծերակոյտն էր տնօրինում հանրապետութեան գանձարանը)։ Բացի այդ, կոնսուլները նշանակւում էին Ծերակոյտի կողմից, իրենց գործողութիւններում հաշուետու լինում ինչպէս Ծերակոյտի, նոյնպէս եւ ժողովրդի առջեւ[59]։

Իր հերթին, Ծերակոյտը պետական գործերում հաշուետու էր ժողովրդին։ Պետական կարեւորագոյն վճիռներ կայացնելիս, ինչպիսին է, օրինակ, պետութեան դէմ ուղղուած յանցագործութիւնների դէպքում մահապատժի վճիռը, նախապէս պէտք է հաւանութիւն ստանար ու հաստատուէր Ժողովրդական ժողովի կողմից, իսկ Ծերակոյտի ու ժողովրդի միջեւ կապող օղակը (ժողովրդի ձայնը) ժողովրդական տրիբունն էր, առանց որի համաձայնութեան Ծերակոյտն իր որոշումները չէր կարող գործի դնել[60]։ Իսկ տրիբունները միշտ գործում էին ժողովրդի օգտին, ուստի Ծերակոյտն ականջալուր էր նրա ձայնին, այդ իսկ պատճառով «վախենում էր ժողովրդից»[61]։

Ինչ վերաբերում է իշխանութեան երրորդ թեւին՝ դատական իշխանութեանը, ապա Ծերակոյտն իր անդամներից (պատգամաւորներից) ընտրում էր դատաւորներ՝ ծանր յանցագործութիւնների, այդ թւում յարուցուած պետական ու մասնաւոր մեղադրանքների համար։ Պողիւբիոսը քննադատում էր կոսմոպոլիտ մտածելակերպի ու աշխարհայեացքի տէր դատաւորներին[62]։ Թէեւ մենք արդի չափանիշներով չենք կարող խօսել դատական իշխանութեան ինքնուրոյնութեան (անկախութեան) մասին, սակայն ժողովրդական տրիբուններն իրենց վճռական խօսքով կարծես համակշռում (կոմպենսացնում) էին այդ բացը։ Իշխանութեան թեւերի տարանջատման հարցը յետագայ դարերում պիտի բարեշրջում (էվոլյուցիա) ապրէր ու հասցուէր մինչեւ պատմութեան միջնադարեան Վերածնունդ ու Նոր շրջան, առնուազն՝ Ն. Մաքիաւելլի, Շ. Մոնթէսքիէօ, Թ. Հոբս եւ միւսներ, մինչեւ որ կը հասնէր ժամանակակից կարգավիճակին։

59 Անդ, գիրք 6, գլ. 15, с. 21:

60 Անդ, գիրք 6, գլ. 16, с. 22:

61 Անդ, գիրք 6, գլ. 17, с. 23:

62 Անդ, գիրք 12, գլ. 16, с. 372:

Այդուհանդերձ, Պողիւբիոսն իր ժամանակի մէջ գտնում էր, որ Հռոմի Հանրապետութեան իշխանութեան երեք թեւերն իրար օգնում եւ փոխգործակցում էին եւ, նրա ձեւակերպմամբ՝ «Դա լաւագոյն պետական կառուցուածքն էր»[63]*։ Պողիւբիոսի կարծիքով՝ ամէնից առաջ գնահատանքի է արժանի այն պետութիւնը, որ յարգում եւ առաջնորդւում է երկու կարեւոր սկզբունքներով՝* սովորոյթներով *եւ* օրէնքներով։ «Այսպէս,- *եզրափակում է նա,-* եթէ ինչ-որ ժողովրդի մօտ մենք նկատում ենք բարի սովորոյթներ ու օրէնքներ, ապա կարող ենք համարձակ պնդել, որ այդտեղ լաւ կը լինեն ե՛ւ մարդիկ, ե՛ւ նրանց հասարակական կառուցուածքը»[64]*։ Օրէնքն ու սովորոյթներն այն հիմնական կռուաններն էին, որոնց հիման վրայ պիտի զարգանային ու կատարելագործուէին քաղաքացիական հասարակութեան, հանրային կեանքի կազմակերպման բարձրագոյն ձեւը հանդիսացող պետութիւնը եւ պետականութեան հաստատութիւնը (ինստիտուտ)։*

Այսպէս՝ Թուկիդիդէսի եւ Պողիւբիոսի պատմութեան, այդ թւում նաեւ պետութեան վերաբերեալ քննական ու քննական-վերլուծական մտքերն ու դատողութիւնները մեթոդական ուղեցոյց պիտի հանդիսանային նոր եւ նորագոյն դարաշրջաններում՝ պետականութեան ինստիտուտի գաղափարի ու գործիքակազմի յետագայ զարգացման, նրա կատարելագործման ու աւելի ժողովրդավարական *դարձնելու ուղղութեամբ։*

Գ. ՊՈՂԻՒԲԻՈՍԻ ՊԱՏՄԱՀԱՄԵՄԱՏԱԿԱՆ ԶՈՒԳԱՀԵՌՆԵՐ ԱՆՑԿԱՑՆԵԼՈՒ ՓՈՐՁԵՐԸ

Սովորաբար պատմահամեմատական մեթոդը կոչուած է համադրելու եւ համեմատելու մէկից աւելի համանման ու ժամանակագրական առումով համեմատաբար իրար մօտ պատմական համակարգերի նմանութիւնն ու տարբերութիւնը, իսկ վերջնարդիւնքում բացայայտել պատմական իրականութիւնն ու ճշմարտութիւնը, արժեւորել դրանք, տալ գիտական գնահատականներ, ցոյց տալ դրանց պատմութեան առաջընթացի ու զարգացման միտումները եւ այլն։ Անտիկ հեղինակների համար համեմատութեան օբյեկտ են հանդիսացել, օրինակ, յունական պոլիսների, Հռոմի եւ Կարթագինէի համեմատութիւնը, կամ Յոյն-պարսկական, Պելոպոնեսեան եւ Փունիկեան պատերազմների զուգահեռ համեմատութիւնները եւ այլն։

63 Անդ, գիրք 6, գլ. 18, c. 24:
64 Անդ, գլ. 47, c. 54:

Այս հարցի մասին խօսելիս Պողիւբիոսը նախ նշում է, որ գրեթէ բոլոր պատմաբանները միանշանակ գովեստով են խօսում Աթենական, Լակեդեմոնեան, Կրետէի, Մանտինեցիների, Ֆիվեանների, նմանապէս Կարթագինէի պետական կառուցուածքի արժանիքների մասին։ Բայց նա լիարժէքօրէն չի կիսում այդ կարծիքը[65]*։ Այսպէս՝ Աթենական պետութեան մասին Պողիւբիոսը լաւ չի արտայայտւում, քանզի նրա կարծիքով՝* «բոլոր գործերը սեփական կամակորութեամբ կառավարում է զանգուածը»[66]*։ Կամ, օրինակ, Լակեդեմոնեան պետութեան թագաւորները, այսպէս կոչուած՝ աւագները, ցմահ կամ ժառանգական էին, եւ բոլոր պետական գործերը վարւում էին նրանց մասնակցութեամբ կամ գիտութեամբ*[67]*։ Իսկ, օրինակ, Կրետէի պետութիւնում մարդկանց առօրեայ կեանքում, նրա ներկայացմամբ, մեծ դեր էր կատարում դրամը, որն աւելի յաճախ ձեռք էր բերւում շահադիտական նպատակով եւ նրա ժողովրդի բարքերում՝* «ոչ մի վաստակ (հարստացում) ամօթ չէր համարւում» *եւ այլն*[68]*։*

Եւ այդ իմաստով Հին աշխարհի պետականութիւնների կառուցուածքային, իրաւական եւ ռազմաքաղաքական գնահատման տեսակէտից, իբրեւ նորոյթ, ուշագրաւ է, որ Պողիւբիոս պատմաբանն ու փիլիսոփան պատմահամեմատական զուգահեռներ *է անցկացրել, բացայայտել դրանց առանձնայատկութիւնները եւ տուել համապատասխան գնահատական*[69]*։ Այսպէս, ինչպէս ասուեց, քաղաքական կառուցուածքի արդիւնաւէտութեան առումով նա համեմատութիւն է անցկացրել հելլենական, լակեդեմոնեան, սպարտացիների, Կրետէի, Կարթագինէի եւ Հռոմի միջեւ եւ* պատմա-

65 Անդ, գլ. 42, c. 50:
66 Անդ, գլ. 44, c. 52:
67 Անդ, գլ. 45, c. 53:
68 *«Никакая нажива не считается постыдною»* (Полибий, նշ. աշխ., հտ. II, գիրք 6, գլ. 46, c. 53):
69 Ուշագրաւ է, որ մեր ժամանակներում պրոֆ. Ա. Ստեփանեանը պոլիբիուսական մեթոդով համանման յաջողուած զուգահեռներ է անցկացրել յունա-հռոմէական եւ հայ հին շրջանի մատենագիրների միջեւ՝ հրապարակ բերելով հոգեմտաւոր եւ գոյաբանական զգալի ընդհանրութիւններ (տե՛ս Ա. Ստեփանեան, *Զուգակշիռ (գաղափար, մեկնութիւն, հասկացում)*, ԵՊՀ հրտ., Երեւան 2024 (368 էջ):

կանութեան (իստորիզմի) հաշուառմամբ յանգել այն հետեւութեանը, որ, այնուամենայնիւ, պետական կառուցուածքի, կառավարման սկզբունքների, օրէնքների ու սովորոյթների կիրառման առումներով նշուածներից լաւագոյնն ու կենսունակը հռոմէական պետութիւնն է[70]։ Մասնաւորապէս, իրար դէմ պատերազմող Կարթագինէի եւ Հռոմի միջեւ համեմատութիւն անցկացնելիս՝ նա նախապատուութիւնը տուել է հռոմէական պետական կառուցուածքին։ Բացի այդ, եթէ Կարթագինէը ռազմական առումով յոյսը դրել էր վարձկանների արիութեան վրայ, ապա հռոմէացիները՝ իրենց սեփական բաղաքացիների ու դաշնակիցների վրայ[71]։

Զուտ պատմականութեան մօտեցում հանդէս բերելով՝ Պողիւբիոսը պարզաբանում էր, որ սկզբում Կարթագինէի պետութիւնը ձեւաւորուած էր հրաշալի, նրանք ունէին թագաւորներ, աւագների խորհուրդ, ազնուականների իշխանութիւն, իսկ ժողովուրդն էլ օգտւում էր իր իրաւունքներից անհրաժեշտ չափով։ Սակայն յետագայում հռոմէական պետութիւնը գերազանցեց Կարթագինէին, ապրում էր ծաղկումի շրջանում եւ, վերջին հաշուով, ապահովեց Հռոմի ծանր, բայց համոզիչ վերջնական (Ն.Ք. 146 թուականին) յաղթանակը[72]։

Այս համատեքստում Ֆրանսացի փիլիսոփայ Շարլ Լուի Մոնթէսքիէօն, Պողիւբիոսի աշխատութեան օրինակով, Հռոմի վերջնական յաղթանակը նոյն կերպ բացատրել է հիմնականում Հռոմի Հանրապետութեան, նրա օրէնքների ու կառավարման համակարգի առաւելութիւններով եւ դրան հակակշիռ՝ Փիւնիկեան պետութիւնում տեղ գտած թերութիւններով, կաշառակերութեամբ եւ այլն, թէեւ Կարթագինէն աւելի հարուստ էր եւ օգտագործում էր օտարերկրեայ վարձկան զօրք, իսկ Հռոմը կռւում էր իր սեփական բանակով[73]։

Պետութիւնների համեմատութեան օրինակով՝ Պողիւբիոսը բնական եւ օրինաչափօրէն ընդհանրացնող հետեւութիւններ է անում այն մասին, որ իւրաքանչիւր պետութիւն ապրում է իր պատմութեան երեք հիմնական շրջաններ (փուլեր)՝ ձեւաւորման, վերելքի (ծաղկման) եւ անկման, ինչպէս, օրինակ, բնութեան մէջ

70 Полибий, նշ. աշխ., հտ. II, գիրք 6, գլ. 18-43, с. 24-50, գլ. 45, с. 52-53, եւ գլ. 47, с. 54-55, գլ. 50, с. 58:
71 Անդ, գլ. 52, с. 59:
72 Անդ, գլ. 51, с. 58-59:
73 Ш. Монтескье, *Изб. произведения*, М., «Гос. издать», 1955, с. 61.

ցանկացած երեւոյթ ունի իր սկիզբը (վերելքը), զարգացումը (ծաղկումը) եւ վայրէջքը (անկումը)[74]։

Պողիւբիոսը պատերազմների հարցում ոչնչական (նիհիլիստ) չէր։ Փիւնիկեան պատերազմները նա հակաիրաւական չէր համարում։ Դրանց նպատակը, ըստ պատմագրի, արդարութեան հաստատումն էր[75]։ Սակայն, արդարութեան հաստատման իմաստով, նա հակուած էր պաշտպանել Հռոմը։ Նրա պատկերմամբ՝ Փիւնիկեան պատերազմի ծագման հիմնական պատճառը Սիկիլիայի վրայ իշխելը, ինչպէս նաեւ Միջերկրական առեւտրական ուղիներին տիրանալն էր[76]։ Պատերազմի պատճառները բացայայտելու համար նա համեմատական կարգով անդրադարձել է դեռեւս Փիւնիկեան պատերազմներից շատ առաջ Հռոմի ու Կարթագինէի միջեւ կնքուած միջպետական մի շարք պայմանագրերի՝ սկսած Ք.ա. 509 թուականից, այնուհետեւ՝ Ք.ա. 481ին, Քսերքսէսի՝ Յունաստան ներխուժումից առաջ, որից յետոյ՝ Ք.ա. 348 եւ 280 թուականների պայմանագրերին։ Հռոմէական պետական դիւանում պահուող այդ պայմանագրերը նա համեմատական քննութեան է ենթարկել[77]։ Սա էլ կարելի է մեթոդական մի ուղեցոյց համարել՝ ցոյց տալու, թէ ինչու եւ ինչպէս պատմաբան-ուսումնասիրողն անպայման պէտք է աշխատի դիւաններում, գործ ունենայ վաւերագրերի հետ։

Հարկ է նշել, որ մի փոքր աւելի ուշ պատմահամեմատական զուգահեռներ անցկացնելու մեթոդն աւելի հանգամանօրէն կիրառել է դարձեալ յոյն պատմագիր Պլուտարքոսը (46-127 թուականներին) իր յայտնի «Համեմատական կենսագրութիւններ» կամ «Զուգակշիռ» աշխատութեամբ[78]։ Սակայն, ինչպէս յայտնի է, եթէ Պլուտարքոսը համեմատական զուգահեռներ է անցկացրել յոյն եւ հռոմէացի պետական, քաղաքական, զինուորական ճանաչուած գործիչների միջեւ, ապա Պողիւբիոսի համեմատութիւնն անցկացուել է ոչ թէ անհատների ու գործիչների, այլ մի խումբ՝ իր ժամանակաշրջանի եւ աւելի վաղ պետութիւնների կառուցուածքի, դրանցում գործող օրէնքների, մղուող պատերազմների, անգամ

74 Полибий, նշ. աշխ., հատ. II, գիրք 6, գլ. 51, էջ 58-59:
75 С.Б. Мирзаев, *Полибий*, М., 1986, с. 90.
76 Полибий, նշ. աշխ., հտ. I, գիրք 1, գլ. 13, с. 25 նաեւ՝ Ն. Մաշկին, *Հին Հռոմի պատմութիւն*, ԵՊՀ հրտ., Երեւան 1951, էջ 232:
77 Полибий, հտ. I, գիրք 3, գլ. 21, с. 265, եւ գլ. 22, с. 266, եւ գլ. 24, с. 268, եւ գլ. 28-29, с. 272, եւ գլ. 32, с. 275:
78 Պլուտարքոս, *Երկեր*, Հ. Հայաստան, (թրգմ. ռուսերէնից), «Հայաստան», Երեւան 1988 (796 էջ):

կնքուած պայմանագրերի, համանման երեւոյթների ու իրադարձութիւնների միջեւ, իսկ վերջում արուած են համապատասխան հետեւութիւններ ու գնահատականներ, ինչը, կարծում ենք, աւելի է բարձրացնում նրա աշխատութեան արժանիքները, եւ, մեր կարծիքով, գերազանցում է Պլուտարքոսի աշխատութեանը։

Պողիւբիոսը իւրայատուկ զուգահեռ է անցկացնում նաեւ պետութեան ղեկավարի եւ իրական պատմութիւն գրող անհատների միջեւ։ Նա Պղատոնի արտայայտած մտքի օրինակով նշում էր, որ մարդկութեան գործերը յաջող կ՚ընթանան այն ժամանակ, երբ փիլիսոփան լինի թագաւոր։ Նոյն կերպ էլ, ըստ նրա՝ «Պատմութիւնն այն ժամանակ լաւ կը լինի, երբ պատմական երկերի կազմմանը ձեռնամուխ կը լինեն պետական գործիչները»[79]*։ Պատմութիւն գրելու հարցում նման կարծիք յայտնելիս նա, հաւանաբար, նկատի է ունեցել իրեն։ Յայտնի է, որ Պողիւբիոսն իր 82ամեայ տեւական կեանքում զբաղեցրել է պետական պաշտօններ, եղել է զօրական գործիչ՝ Արքոնտ եւ այլն։*

Այս ամէնը Հին Յունաստանի եւ որոշ առումներով նրա շարունակութիւնն ու զարգացումը հանդիսացող Հին Հռոմի հանրապետական, ժողովրդավարական ընդօրինակելի նմոյշներ են, որոնք արդիական են եւ շատ կողմերով ուսանելի ու կիրառելի նաեւ մեր ժամանակներում։ Ինչ վերաբերում է հայ պատմագիտական գրականութեան մէջ քննական ու վերլուծական բնոյթ ունեցող աշխատութիւններին, ապա նման մօտեցումներով զուտ բնական բնոյթի աշխատութեան հեղինակ-պատմաբաններից, թերեւս, կարելի է մտաբերել Ա. Գարագաշեանին, Հ. Մանանդեանին, Ն. Ադոնցին եւ նրանց, որոնց ուսումնասիրութիւնների վերնագրերն իսկ վկայում են դրանց քննական բնոյթի մասին[80]։ Սակայն դա ամենեւին չի նշանակում, թէ միւս պատմաբանները եւ, ընդհանրապէս, հայ պատմագիտական միտքը պատմութեան հանդէպ հանդէս չեն բերել քննական ու վերլուծական բաւարար մօտեցումներ։

---

79 Полибий, նշ. աշխ., հատ. II, գիրք 25, գլ. 28ա, с. 397։

80 Ա. Գ. Գարագաշեան, *Քննական պատմութիւն հայոց*, հտ. 1-4, Թիֆլիսի հայոց հրտ. ընկ., Թիֆլիս 1895։ Հ. Մանանդեան, *Քննական տեսութիւն հայ ժողովրդի պատմութեան* (տե՛ս *Երկեր*, Հայկ. ՍՍՀ ԳԱ հրտ., Ա., Երեւան 1977, հտ. Բ., Երեւան 1978, հտ. Գ., Երեւան, 1977։ Н. Адонц, *Армения в эпоху Юстиняна*, СПб, тип. имп АН, 1908։ Ն. Ադոնց, *Քննութիւն Մովսէս Կաղանկատուացու*, Մայր Աթոռ Ս. Էջմիածին, Էջմիածին 2005։

Այսպէս, պատմութեան, պետութեան եւ հասարակական կեանքի այլ հարցերում Թուկիդիդէսի հանդէս բերած քննական մօտեցումները յետագայում պէտք է զարգացնէր ու նոր որակի հասցնէր նրա մտքերի ու գաղափարների ժառանգորդ, յոյն ականաւոր պատմաբան Պողիւբիոսը (մօտ Քրիստոսից առաջ 200–118 թուականներին)։ Վերջինիս «Համընդհանուր պատմութիւն» *աշխատութիւնները ծառայում է ոչ միայն որպէս իրենց դարաշրջանների վերաբերեալ պատմագիտական* սկզբնաղբիւր, *այլեւ դրանցում բարձրացուած ու քննութեան առնուած հարցերն աչքի է ընկնում պատմական նիւթի* բնական-վերլուծական *ընկալման կարողականութեամբ, որոնք եւ յետագայում տեսական ու մեթոդաբանական առումներով հիմք եւ ուղեցոյց հանդիսացան պատմագրութեան զարգացման եւ պատմագիտական միտքը ճշմարիտ ուղու վրայ դնելու տեսանկիւնից։ Աւելին, Պողիւբիոսն առանձնացաւ նաեւ պետականութեան գաղափարի, կառավարման ձեւերի միջեւ քննական-վերլուծական, պատմահամեմատական զուգահեռներ անցկացնելով եւ աւելի խոր ու առարկայական պատմութեան հանդէպ տեսական-մեթոդաբանական մօտեցումներով ու գնահատականներով։*

ԱՐԱՐԱՏ ՅԱԿՈԲԵԱՆ

Summary

GREEK HISTORIAN POLYBIUS AS BEGINNER OF CRITICAL-ANALYTICAL APPROACHES TO HISTORY
(Issues in the Methodology of History)

ARARAT HAKOBYAN

It is known that the first building blocks of the theory and methodology of history were largely laid by outstanding historians of the Ancient World: Herodotus, Xenophon, Thucydides, Plutarch, Polybius, Tacitus and others. When assessing the theoretical and methodological merits of the mentioned historians, first of all, they should be assessed in this era, which became the basis for the development of further world historical thought and methodological approaches to the study of history.

In particular, a consideration of Polybius's "General History" shows that his ideas, observations, and methodological approaches to history remain unrivaled in his time and space. His historiographical and methodological observations were based on the extraction of historical material, real history, reality, a distortion-free presentation of history, based on the fact that the only guarantee of the impartiality of historical science is truth. And made observations and analytical approaches to history, in particular with episodes of the Punic Wars, analysis, accumulated experience and lessons to be learned. It is worth noting that for thousands of years Polibio's work served not only as a theoretical and methodological guide, but also as a rich historical source for his era.

In particular, thoughts and judgments about the idea of the state and forms of government put forward by Polybius, discussions about historical and comparative parallels, the cause-and-effect relationship of phenomena, historicity, etc. served as theoretical and methodological guidance on further reforming the institution of statehood, improving it and giving more democracy.

They were further developed during the Renaissance, Reformation, Humanism and Enlightenment, and then in New and Contemporary times.

ՀԱՅԱՍՏԱՆԸ ԵՒՐՈՊԱՅԻ ԵՒ ԱՍԻԱՅԻ ՄԻՋՄԾԱԿՈՒԹԱՅԻՆ ՅԱՐԱԲԵՐՈՒԹԻՒՆՆԵՐԻ ՀԱՆԳՈՅՑՈՒՄ Ժ.-ԺԴ. ԴԱՐԵՐՈՒՄ ԸՍՏ ԴՐԱՄԱԳԻՏԱԿԱՆ ՏՈՒԵԱԼՆԵՐԻ

Հայաստանը Ժ.-ԺԴ. դարերում գտնուում էր քաղաքատնտեսական անկայուն, բարդ իրավիճակում, երբ օտար կեղեքիչների յարձակումների ժամանակ երկիրը ժամանակ առ ժամանակ ապրում էր իր հերթական կորուստները։

Ջնայած Հայաստանի այդ անկայուն, խառնաշփոթ իրավիճակներին հայկական միջնադարեան շուկաներում քարաւանային առեւտրի շնորհիւ տեղի էին ունենում ոչ միայն օտար դրամների ներթափանցում, այլեւ գործում էր ժամանակի տարբեր տարադրամների փոխանակման կենտրոններ շուկաներում։ Հայաստանի աշխարհագրական դիրքը կարեւոր նշանակութիւն ունէր առեւտրի համար։ Հնագիտական պեղումների, ինչպէս նաեւ պատահական գտածոների արդիւնքում գտնուել են առանձին դրամներ կամ դրամական գանձեր ինչը վկայում է, որ Հայաստանում լայն տարածում են ունեցել օտար պետութիւնների կողմից հատուած դրամները, որոնք ազատ ընդունուում էին եւ շրջանառուում հայկական շուկաներում։

Ժ.-ԺԴ. դարերում Հայաստանի համար աւերիչ էր դառնում ոչ միայն օտար զաւթիչների զէնքն այլեւ նրանց կողմից վարած դրամա-առեւտրային քաղաքականութիւնը։ Հաստատուելով տարածաշրջանում նրանք իրենց թողարկած դրամներով ոչ միայն դրամական համակարգի նոր կանոններ այլեւ դրամների միջոցով տարածում էին մահմետական դաւանանքի գաղափարախօսութիւնը։ Քաղաքական հանգամանքներից դրդուած Հայաստանը չունէր իր ազգային դրամն, ինչի պատճառով ստիպուած էր օտար նուաճողների կողմից հատուած եւ շրջանառուող դրամներով իրականացնել առեւտրական գործարքները։